

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՀՀ ԱՆ պրորբացիայի ծառայության 2019թ-ի առաջին եռամսյակի ընթացքում
իրականացրած գործունեության վերաբերյալ**

ՀՀ ԱՆ պրորբացիայի ծառայությունը բաղկացած է 11 տարածքային մարմիններից, որոնք գործում են Հայաստանի Հանրապետության մարզերում /թվով 10/ և Երևան քաղաքում: Մարզային բաժիններն ունեն 27 նստավայր:

Պրորբացիայի ծառայությունն իրականացնում է ազատությունից զրկելու հետ չկապված քրեական պատիժներ՝ տուգանքը, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, հանրային աշխատանքները, իրականացնում է վերահսկողություն պատժից պայմանական վաղաժամկետ ազատված, պատիժը պայմանականորեն չկիրառված և հղի կանանց կամ մինչև 3 տարեկան երեխա ունեցող կամ այլ հիմքերով պատիժը հետաձգված անձանց նկատմամբ, ինչպես նաև կազմում և ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներին ներկայացնում է զեկույցներ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ:

Ծառայությունում 2019թ-ի առաջին եռամսյակի ընթացքում գրանցվել են հետևյալ քանակությամբ պատիժներ և վերահսկողություններ, զեկույցներ՝

	Պատիժների և վերահսկողությունների տեսակները և քանակները							Ընդամենը
	Տուգանք	Որոշակի պաշտոններ	Հանրային աշխատանք	Պատիժը պայմ. չկիրառել	Վարքի վերահսկ.	Պատժից պ/վ ազատել	Պատժի հետաձգում	
2018թ.-ից փոխանցված	511	297	177	1273	3	38	12	2311
2019թ.-ին ստացված	60	65	5	95	2	46	0	273
Ընդամենը	571	362	182	1368	5	84	12	2584

Զեկույցներ	
2018թ.-ից . փոխանցված	496
2019թ.-ին . ստացված	221
Ընդամենը	717

Ծառայությունում 2019թ-ի առաջին եռամսյակի ընթացքում հաշվառվել է 2473 շահառու, որոնցից 200-ը կանայք են, 25-ը անչափահաս, իսկ 15-ը օտարերկրյա քաղաքացիներ: Նրանց նկատմամբ նշանակվել է 1115 պատիժ, 1469 վերահսկողություն, ընդ որում 111 շահառու ունի կրկնակի պատիժ և վերահսկողություն:

«ԱՆ քրեակատարողական հիմնարկներից ստացվել է զեկույց տրամադրելու վերաբերյալ 717 ծանուցում, որոնցից 25-ը կանայք են:

Ծառայությունում 2019թ-ի առաջին եռամսյակի ընթացքում արխիվացվել է 1188 անձնական գործ, որից 67 զեկույց, ընթացքի մեջ է 2002 անձնական գործ, որից 650 զեկույց:

Պրոբացիայի ծառայությունում 01.04.2019թ.-ի դրությամբ համաներումը կիրառվել է 2655 շահառուի նկատմամբ, որից 943-ը 2019թ-ի առաջին եռամսյակի ընթացքում:

1. Տուգանք. 571 տուգանք պատժատեսակի ընդհանուր գումարը կազմում է 257.894.750 «Ա» դրամ, որից փաստացի կատարվել է 29 տուգանք, փաստացի գանձված գումարը կազմում է 28.701.000 «Ա» դրամ, իսկ մասնակի գանձվել է 2.479.300 «Ա» դրամ, ընդհանուրը 31.180.300 «Ա» դրամ: 258 տուգանք գտնվում է միջնորդություն ներկայացնելու ժամկետի մեջ, որոնց գումարը կազմում է 106.480.350 «Ա» դրամ, 30 տուգանք տարաժամկետված է, որոնց գումարի չվճարված մասը կազմում է 8.539.000 «Ա» դրամ, 25 տուգանքի կատարումը հետաձգվել է, որոնց չվճարված գումարը կազմում է 11.800.000 «Ա» դրամ, 2 տուգանքի կատարումը կասեցվել է, որոնց գումարը կազմում է 900.000 «Ա» դրամ (բողոքարկված է), 39 շահառուի մոտ տուգանքի կատարումը դադարեցվել է նոր հանցանք կատարելու փաստով (կալանավորվել են), ընդհանուր գումարը՝ 19.744.000 «Ա» դրամ, 187 տուգանք կարճվել է, որոնց չվճարված գումարը կազմում է 78.541.100 «Ա» դրամ (1-ը մահ,13-ը վաղեմություն, **173-ը համաներում**):

Ծառայությունում փաստացի ընթացքի մեջ է 354 տուգանք, որոնց գումարի չվճարված մասը կազմում է 147.463.350 «Ա» դրամ:

571 տուգանք պատժից 61-ը նշանակվել է կանանց, իսկ 2-ը օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ:

2. Հանրային աշխատանքներ. Հաշվետու ժամանակաշրջանում հանրային աշխատանքների ձևով պատիժ է նշանակվել 182 շահառուի նկատմամբ, որից 62 անձնական գործ գտնվում է ընթացքի մեջ, որոնցից ներկայումս աշխատում են 23-ը, 12-ի վերաբերյալ կնքվում են պայմանագրեր, իսկ 24-ը՝ չեն աշխատում (8-ը հետախուզում, 7 -ի վերաբերյալ ներկայացվել է պատիժը փոխարինելու միջնորդություն, 9-ը բողոքարկվել է վերաքննիչ դատարան), 7 հանրային աշխատանքներ փաստացի կատարվել են, 65-ի պատիժը կասեցվել է (65-ը գտնվում են ազատազրկման մեջ), 30-ի պատիժը կարճվել է (2-ը մահ, 1-ը դատարանի որոշմամբ, **27-ը համաներում**), 17 շահառուի պատիժը դադարեցվել է նոր հանցանք կատարելու փաստով (կալանավորվել են), մեկ դատապարտյալի նկատմամբ նշանակված հանրային աշխատանքները բաժնի միջնորդության հիման վրա փոխարինվել է ազատազրկմամբ:

182 հանրային աշխատանքներ պատժատեսակից 6-ը նշանակվել է կանանց նկատմամբ:

Հանրային աշխատանքներ պատժատեսակի իրականացումն ապահովելու և այն առավել հանրագուտ դարձնելու նպատակով Պրոբացիայի ծառայության բաժինները համագործակցում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հետ, որոնց հետ կնքվում են պայմանագրեր, հետագա գործընթացի կազմակերպման նպատակով:

3. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատիժ կրող շահառուների թիվը կազմում է 362, որոնցից 316-ի գործերը գտնվում են ընթացքի մեջ, հաշվառումից հանվել են 41 շահառու՝ պատիժը փաստացի կատարելու հիմքով, 2-ը կասեցված է դատարանի որոշմամբ, 2 անձնական գործ կարճվել է՝ 1-ը շահառուի մահվան հիմքով, իսկ **1-ի նկատմամբ կիրառվել է համաներում**, որպես հիմնական պատիժ:

362 որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատժից 29-ը նշանակվել են կանանց նկատմամբ, իսկ 3-ը օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ:

362 որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատժից 261-ը վերաբերվում են տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելուն, իսկ 101-ը՝ այլ գործունեությունից:

4.Վերահսկողություններ. 1368 շահառուի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, որոնցից ընթացքի մեջ են 518-ը, 81-ի նկատմամբ սահմանված փորձաշրջանի ժամկետը փաստացի ավարտվել է, 737-ի փորձաշրջանը կարճվել է (1-ը նոր դատավճիռ, 2-ը մահվան հիմքով, 22-ը օրենքի փոփոխությամբ, **709-ը համաներմամբ**), 21-ի նկատմամբ փորձաշրջանը դադարեցվել է նոր հանցանք կատարելու հիմքով (կալանավորվել են), 2-ի փորձաշրջանը վերացվել է բաժնի միջնորդության հիման վրա:

1368 փորձաշրջանից 115-ը նշանակվել են կանանց, 20-ը՝ անչափահասների, իսկ 5-ը օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ:

Ծառայությունում հաշվառված 5 անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է կիրառվել է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց:

Փորձաշրջանի մեջ գտնվող 26 շահառու զորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության:

Փորձաշրջանի մեջ գտնվող 34 շահառուի անձնական գործերը ստացվել են ՀՀ ՊՆ տարբեր զորամասերից:

Վերահսկողությունից խուսափող 27 շահառու գտնվում է հետախուզման մեջ:

----- Ազատագրված ձևով նշանակված պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատված դատապարտյալներից պրոբացիայի ծառայությունում, ըստ ստացված որոշումների, հաշվառվել է 84 շահառու, որոնցից 36-ի նկատմամբ վերահսկողությունն ընթացքի մեջ է, 16-ը՝ փաստացի ավարտվել է, իսկ 4-ի շահառուի

նկատմամբ վերահսկողությունը դադարեցվել է նոր հանցանք կատարելու փաստի հիման վրա (կալանավորվել են), 1-ի վերահսկողությունը կարճվել է մահվան հիմքով, **27 շահառուի նկատմամբ կիրառվել է համաձայնում** և նրանց նկատմամբ վերահսկողությունը դադարեցվել է:

Պատժից պայմանական վաղաժամկետ ազատվածներից 81-ը տղամարդ են, իսկ 3-ը կին:

----- Պրորազիայի ծառայությունում հաշվառված են պատժի կրումը հետաձգված 12 շահառու, որոնցից 11-ի պատիժը հետաձգված է հիվանդության պատճառով, 1-ը ունի մինչև 3 տարեկան երեխա:

Պատժի կրումը հետաձգված 7 շահառուի նկատմամբ վերահսկողությունը կարճվել է՝ 1-ը վաղեմության հիմքով, իսկ **6 շահառուի նկատմամբ կիրառվել է համաձայնում:**

Պատժի կրումը հետաձգված 12 շահառուից 10-ը տղամարդ են, իսկ 2-ը կին:

Ձեկույց

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ զեկույցներ տրամադրելու վերաբերյալ 717 անձնական գործերից, 221 ծանուցումները ստացվել է 2019թ-ի առաջին եռամսյակի ընթացքում:

Ներկայումս ընթացքի մեջ է 650 անձնական գործ, 67-ը արխիվացվել է, 532 զեկույցներով ներկայացվել է եզրակացություն՝ (150-ը դրական, 382-ը բացասական):